

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՌԻԴԵՐՁԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միտելի՝ հայրենակիցներ

Նոյեմբերի 10-ին լրանում է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման 22-ամյակը: Այդ կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ ոլորտի ներկայացուցիչներին՝ համայնքների ղեկավարներին, ավագանիների անդամներին, համայնքային ծառայողներին եւ համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին: Անցած տարիների փորձի հիման վրա կարող ենք արձանագրել, որ չնայած համակարգը երկար ճանապարհ է անցել, գրանցել որոշակի հաջողություններ, սակայն դեռեւս ունի խնդիրներ ու աստիճանական զարգացումներով ավելի բարձր մակարդակների հասնելու պահանջ: Իսկ տվյալ նպատակը նոր կառուցվող Հայաստանի ներկա պայմաններում կարիք ունի առավել թարմ մոտեցումների եւ համակարգային լուրջ բարեփոխումների, որին ձեռնամուխ կլինի մեր պետությունը՝ իրականացնելով համայնքների կարողությունների զարգացման ու ամրապնդման իրատեսական քաղաքականություն: Կրկին շնորհավորում եմ բոլորիս պետական այս կարեւոր տոնի առիթով եւ հաջողություններ ու արդյունավետ աշխատանք եմ մաղթում տեղական ինքնակառավարման ոլորտի ու նրա հետ համագործակցող պետական կառավարման համակարգի աշխատակիցներին:

10.11.2018թ.